ՄԱՐԳԱՐԷ

Պուշկինի

Духовной жаждою томимъ...

Հոգով ծարաւի վերածընութեան՝
Դեգերում էի մռայլ անապատում,
Եւ մի սերովբէ ահա վեցթևեան
Ցանկարծ երևաց իմ ճանապարհում։
Մատներով թեթև՝ երազի նման՝
Անցաւ իմ պըղտոր բիբերիս վրան,—
Եւ լայն բացուեցան իմաստուն բիբեր,
Ինչպէս վախեցած արծըւի աչքեր.
Իմ ականջներին նա թեթև դիպաւ
Եւ լցրեց ժըխոր և ձայներ անբաւ,—
Եւ ես լըսեցի երկնի երերում,
Եւ վերին թըռիչք սուրբ ոգիների,
Եւ սողունների շարժումը ծովում,
Եւ հովիտներում փըթթելը որթի։
Եւ նա իմ բերնին մերձեցաւ հրպեց
Եւ մեղսոտ լեզուս արմատից պոկեց,
Իմ դատարկախօս լեզուն նենգաւոր,
Եւ իմ բերանում՝ մեռեալ ու սառած՝
Դըրեց իմաստուն օձի խայթ հրզօր
Իր աջ ձեռքովը՝ արիւնով ներկուած.
Եւ նա իմ կուրծքը սրրով պատառեց
Եւ հանեց սիրտս. դողդող ու տրկար՝
Եւ իմ պատառուած կըրծքի մէջ դըրեց
Սըրտի փոխարէն՝ կըրակ բոցավառ.
Անապատի մէջ լուռ, դիակի պէս,
Ընկած էի ես,—և ասաց ինձ Տէր.
«Ելիր, մարգարէ՝, և լըսիր և տես.
Իմ կամքը թող քեզ լինի քաջալեր.
Եւ ծով և ցամաք շըրջագայելով
Մարդկանց սըրտերը բորբոքիր խօսքով!»

Լ. Մանուէլեան